ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/79

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 08.06.2018թ. թիվ 03/26-3/10343-18 գրությամբ «Պրովայդեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.06.2018թ. թիվ ԴՎԱ/2050 գրության հիման վրա, 08.06.2018թ. թիվ 03/26-3/10343-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Պրովայդեր» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Պրովայդեր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Պրովայդեր» ՍՊԸ-ի ներկայացուցիչը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 15.06.2018թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն հետևյալ պատճառաբանությամբ.

«Պրովայդեր» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ):

Գնահատող հանձնաժողովի 17.05.2018թ. որոշման համաձայն՝ Ընկերությունն առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել 1-2, 10-15 և 63-րդ չափաբաժինների մասով:

Գնահատող հանձնաժողովի 14.05.2018թ. 4-րդ արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, որի պատճառով Հանձնաժողովը, սահմանված կարգի համաձայն, հնարավորություն է տվել շտկել անհամապատասխանությունները:

Ընկերությունը 25.05.2018թ. շտկումները ուղարկել է a.baghramyan@mil.am էլ. փոստին ինչը հաստատվում է Ընկերության էլ. փոստի արտատպումով:

Հետևաբար ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) այն փաստարկը, որ Ընկերության կողմից շտկումները չեն ներկայացվել չեն համապատասխանում իրականությանը:

Բացի այդ ուշագրավ է նաև Պատվիրատուի 06.06.2018թ. թիվ ԴՎԱ/2050 գրության երկրորդ էջի երկրորդ պարբերությունը, համաձայն որի հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում նշված անհամապատասխանությունները չեն շտկվել գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը 37-րդ և 52-րդ չափաբաժինների մասով:

Հարկ է նշել, որ անհամապատասխանությունները առկա են եղել 1-2 և 10-րդ չափաբաժինների մասով, հետևաբար գնահատող հանձնաժողովն իրավասու չէր հայտը մերժել 37-րդ և 52-րդ չափաբաժինների մասով, որոնց մասով Ընկերությունը նույնիսկ հայտ չի ներկայացրել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/79 ընթացակարգի շրջանակներում 11.06.2018թ. ժամը 11:30-ին և 15.06.2018թ. ժամը 11:25-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է գրությամբ ներկայացված դիրքորոշումը, ինչպես նաև հայտնել, որ Ընկերությունը կարող է բացել իր էլեկտրոնային փոստը և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ցուցադրել անհամապատասխանությունների շտկումը սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովին ուղարկելու փաստը հավաստող համապատասխան էլեկտրոնային նամակը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 06.06.2018թ. թիվ ԴՎԱ/2050 գրությամբ հայտնել է, որ 24.05.2018թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/8» ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում պարզվել է, որ «Պրովայդեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով պահանջվող որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- 1, 2, 10, 11, 12, 13, 14, 15 և 63-րդ չափաբաժիններում առաջին տեղ զբաղեցնող էր ճանաչվել «Պրովայդեր» ՍՊԸ-ն, որին ուղղված ծանուցման մեջ նշվել էր, որ մասնակիցը պարտավոր է սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել հրավերով պահանջվող որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, սակայն վերջինիս կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում էր 10-րդ չափաբաժնի մասով որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը (տեխնիկական բնութագիրը):
- Հավելված 6.1-ում 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով արտադրողի անվանումը նշված էր սխալ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ

աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել «Պրովայդեր» ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Սակայն «Պրովայդեր» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում նշված անհամապատասխանությունները չեն շտկվել: Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ մասը, որոշել է մերժել վերջինիս հայտը 37-րդ և 52-րդ չափաբաժինների մասով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/79 ընթացակարգի շրջանակներում 11.06.2018թ. ժամը 11:30-ին և 15.06.2018թ. ժամը 11:25-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/79 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/79 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար վերանորոգման ծախսային նյութերի և պահեստամասերի (ծախսային նյութեր) ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Պրովայդեր» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.05.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.05.2018թ. «Պրովայդեր» ՍՊԸ-ին ճանաչել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 10-15-րդ և 63-րդ չափաբաժինների մասով, որին սահմանված կարգով ծանուցվել է Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 2՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն «Պրովայդեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ներկայացված փաստաթղթերում բացակայում է 10-րդ չափաբաժնի մասով որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, հավելված 6.1-ում անհրաժեշտ է հստակեցնել 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով նշված արտադրողի անունը: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել է և 24.05.2018թ. Ընկերությանը սահմանված կարգով ծանուցվել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 30.05.2018թ. կայացրած որոշմամբ «Պրովայդեր» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 10-րդ չափաբաժինների մասով մերժել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել արձանագրված անհամապատասխանութ-յունները:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 08.06.2018թ. թիվ 03/26-3/10343-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.06.2018թ. թիվ ԴՎԱ/2050 գրությունը և կից փաստաթղթերը, «Պրովայդեր» ՍՊԸ-ի 15.06.2018թ. գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար վերանորոգման ծախսային նյութեր և

պահեստամասեր (ծախսային նյութեր) ձեռքբերման նպատակով հայտարարվել է . «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Պրովայդեր» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/8» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարության համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է առաջին զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/8» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.05.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.05.2018թ. «Պրովայդեր» ՍՊԸ-ին ճանաչել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 10-15-րդ և 63-րդ չափաբաժինների մասով, որին սահմանված կարգով ծանուցվել է Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի 3.1 ենթակետով նախատեսվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Պրովայդեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ներկայացված փաստաթղթերում բացակայում է 10-րդ չափաբաժնի մասով որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, հավելված 6.1-ում անհրաժեշտ է հստակեցնել 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով նշված արտադրողի անունը: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել է, և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ***24.05.2018թ.*** Ընկերությանը սահմանված կարգով Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցել է մինչև կասեցման ժամկետի ավարտը վերոհիշյալ անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 30.05.2018թ. կայացրած որոշմամբ «Պրովայդեր» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 10-րդ չափաբաժինների մասով մերժել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները:

«Պրովայդեր» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 15.06.2018թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը 25.05.2018թ. շտկել է անհամապատասխանությունը և համապատասխան շտկումները ուղարկել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի a.baghramyan@mil.am էլեկտրոնային փոստին, ինչը հաստատվում է կից ներկայացվող Ընկերության էլեկտրոնային փոստի համապատասխան էջի արտատպումով:

Ուսումնասիրելով ներկայացված ապացույցն, արձանագրում եմ, որ «Պրովայդեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փոստի համապատասխան էջի արտատպված տարբերակում երևում է, որ ***Ընկերության կողմից մատնանշված նամակը գտնվում է ոչ թե «Ուղարկվածներ» (Отправленные), այլ մեկ ուրիշ «Սևագրեր» (Черновики) թղթապանակում: Դրա հետ մեկտեղ Ընկերության ներկայացուցիչը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ցուցադրել է Ընկերության էլեկտրոնային փոստի համապատասխան էջերի պարունակությունը, որի հիման վրա,***

նույնպես արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի a.baghramyan@mil.am էլեկտրոնային փոստին ուղղված «Պրովայդեր» ՍՊԸ-ի համապատասխան նամակը բացակայում է Ընկերության էլեկտրոնային փոստի 25.05.2018թ. «Ուղարկվածներ» (Отправленные) բաժնում, այլ էլեկտրոնային նամակը 25.05.2018թ. ձևավորվել է «Սևագրեր» (Черновики) բաժնում, որը սակայն չի ուղարկվել a.baghramyan@mil.am էլ. փոստին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «Պրովայդեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքը, ինչպես նաև «Պրովայդեր» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստում առկա տեղեկատվությունը, գտնում եմ, որ Ընկերությունը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել ստանձնած պարտավորության խախտում, քանի որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի շտկել ներկայացված փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 13-րդ կետով նախատեսված լիազորված մարմին, «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների վերաբերյալ» 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանման մեջ նշել է, որ եթե գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը չի բավարարում հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, իսկ ապրանքների գնման դեպքում նաև Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն և մասնակիցը մեկ աշխատանքային օրվա ընթացքում չի շտկում անհամապատասխանությունը, ապա, անկախ նշված ժամկետից հետո այդ անհամապատասխանությունը շտկելու

հանգամանքից, պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին:

Ընդ որում, այս դեպքում, նկատի ունենալով, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին, իսկ ապրանքների գնման դեպքում նաև հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը չի բավարարում հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, իսկ ապրանքների գնման դեպքում նաև Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն, ուստի այդ հանգամանքը դիտարկվում է որպես մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչի արդյունքում դադարեցվում է այդ մասնակցի հետագա մասնակցությունը գնման գործընթացին և մասնակիցը ներառվում է ցուցակում:

Այսպիսով՝ հիմք ընդունելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Պրովայդեր» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/8» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 08.06.2018թ. թիվ 03/26-3/10343-18 գրությամբ «Պրովայդեր» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00908664) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Պրովայդեր» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**